ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է բաց մրցույթ ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «**Թումանյանի առողջության կենտրոն**» ՊՓԲ ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է բաց մրցույթ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲ ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Առողջապահական, ներառյալ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մինչև 5000 բնակչության սպասարկող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններում գործադիր մարմնի հավակնորդ կարող է լինել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն կրթություն և առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ առողջապահության ոլորտում կամ

2) բարձրագույն կրթություն և հանրային առողջության և առողջապահության կազմակերպման, առողջապահության կառավարման ոլորտի հետավարտական մասնագիտական կրթություն կամ

3) բարձրագույն կրթություն և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Կառավարության որոշմամբ հաստատված մագիստրոսի կրթական ծրագրերով մագիստրոսի որակավորում:

Մրցույթը կանցկացվի՝ 2026 թվականի սեպտեմբերի 24-ին ժ. 11:00-ին :

Մրցույթին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիները ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ. (արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է **մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ**, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2026թ. օգոստոսի 21-ը:

Մրցույթը կկայանա ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի շենքում /գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1/: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, հեռ. 0322-4-02-66/:

ՀՀ Լոռու մարզպետ Ա. Մկրտչյանին

……
/դիմողի անունը,հայրանունը,ազգանունը/

……
/դիմողի գրանցման հասցեն/

……
/դիմողի հեռ. (աշխատանքային, բջջային, բնակարան), էլ.փոստ/

……
/անձնագրի /ՆՔ/ սերիան, համարը, երբ և ու՞մ կողմից է տրվել/

Ծնված՝ ……
/օրը, ամիսը, տարին, վայրը/

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու ……
/թափուր պաշտոնի լրիվ անվանումը/
…… …… …… …… տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

Սույնով հայտնում եմ, որ.

1. Հայերենին …… :
/տիրապետում եմ, չեմ տիրապետում/
2. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ……
/Ճանաչվել եմ, չեմ ճանաչվել/
3. Սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն …… :
/ունեմ, չունեմ/
4. …… այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական
/տառապում եմ, չեմ տառապում/
պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը:
5. …… համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու
/ունեմ, չունեմ/
ունակություն:
6. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից …… :
/խուսափել եմ, չեմ խուսափել/
7. Օրենքի համաձայն որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ զբաղվելու որոշակի գործունեությամբ ……:
/չի արգելվել, արգելվել է/
8. Նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար ……:
/եղել եմ, չեմ եղել/

Տիրապետում եմ հետևյալ օտար լեզուներին (տիրապետում եմ ազատ կամ կարդում և կարող եմ բացատրվել)

……

……

Կից ներկայացնում եմ պահանջվող հետևյալ փաստաթղթերը.

1. Անձնագրի /ՆՔ/ պատճենը՝ _____ թերթ
2. Բարձրագույն կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները)՝ _____թերթ
3. Աշխատանքային գրքույկի պատճենը՝ _____ թերթ
4. Զինվորական գրքույկի պատճենը՝ _____ թերթ
5. Գունավոր լուսանկար 3x4 սմ չափի _____ հատ
6. Ինքնակենսագրություն՝ _____ թերթ
7. Բնութագիր՝ _____ թերթ
8. Տեղեկանք՝ դատվածության հանված կամ մարված լինելու վերաբերյալ՝ _____թերթ
9. Տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ՝ _____թերթ
10. Տեղեկանք՝ ՀՀ կառավարության 15.02.2019թ. 98-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ՝ _____թերթ
11. Այլ փաստաթղթեր /նշել/՝

_____

_____

_____:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____/ / «_____» _____ 2026 թ.
/ստորագրություն/